

«ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ»

Սահմանափակ Պատասխանատվության Ընկերության

2015 թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

Ընկերությունը 2015-ին իր առջև խնդիր էր դրել ապահովել գործարար ծրագրով նախատեսված ցուցանիշներն առավել ընդգրկուն կազմով, սակայն տարածաշրջանի և ՀՀ ֆինանսական շուկաներում ստեղծված ոչ բարենպաստ իրավիճակը փոխեց ամբողջ պատկերը:

Դեռևս 2014թ. նոյեմբեր- դեկտեմբերից սկսված ՀՀ դրամի արժեզրկման տեմպերը շարունակվեցին մինչև 2015թ-ի ապրիլ, այնուհետև ՀՀ ֆինանսական շուկան թևակոխեց վերականգնման փուլ, իսկ ՀՀ ֆինանսական շուկայի ցուցանիշների վարքագծերի բացասական ազդեցությունն ուղղակիորեն անդրադարձավ Ընկերության գործունեության արդյունքների վրա: Ներկայացնենք վերոնշյալ հիմնական ցուցանիշներից մի քանիսը համեմատական/ժամանակագրական/ աղյուսակի տեսքով՝

ՀՀ ԿԲ կողմից Սահմանման ամսաթիվ	Դրամական միջ. ներգրավման	Լոմբարդային ռեպո	Վերաֆինանսավորման	Բանկերի կողմից սահմանված ռեպո տոկոսադրույք
23/12/14	7%	20%	8.50%	24%
22/01/15	8%	17%	9.50%	21-24%
10/02/15	9%	14.50%	10.50%	16.5-22%
12/03/15	9%	13.50%	10.50%	15-16%
24/03/15	9%	12%	10.50%	13-14%
10/08/15	8.75%	11.75%	10.25%	11.5-12.25%
10/11/15	8.25%	11.25%	9.75%	10.87-11.5%
23/12/15	7.25%	10.25%	8.75%	10.35-10.5%

Հարկ է նշել, որ 2015թ-ի ընթացքում ՀՀ Ֆինանսների նախարարությունը թողարկել է 3 նոր պետական գանձապետական պարտատոմսեր, բացի այդ բոլոր ՀՀ ՊԳՊ տարեկան եկամտաբերություններն աճել են 2014թ-ի վերջում և 2015թ-ի սկզբում առկա ցուցանիշների համեմատ: Ընկերությունն, օգտվելով վերոնշյալ հանգամանքից, 2015թ-ի ընթացքում բարձր տարեկան եկամտաբերությամբ ձեռք է բերել ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր և վաճառել է իր պորտֆելում առկա ցածր տարեկան եկամտաբերությամբ պարտատոմսերը: Բացի այդ նոր գնված պարտատոմսերի մեծամասնությունը դասակարգվել է որպես մինչև մարում պահվող ֆինանսական ներդրումներ, ինչի արդյունքում Ընկերությունը նվազագույնի է հասցրել իր վնասները:

Ամփոփելով Ընկերության հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Ընկերությունը ՀՀ ֆինանսական շուկայի ցնցումներից հետո 2015 թվականին ապահովեց ընդամենը -72.00 մլն դրամ զուտ շահույթ: Ընկերության 2015թ-ի սեպտեմբերի նույն ցուցանիշի հետ համեմատած զուտ շահույթն աճել է 30 մլն դրամով/եղել է -101.00 մլն դրամ/:

2015թ. դեկտեմբերի ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԲ կողմից բանկերի հետ ռեպո գործարքների կնքման ընթացքում ՊՊ գնահատման սկզբունքներում /ավելի խստացվել են հաշվարկները/, ինչն ուժի մեջ է մտել 01.01.2016թ-ից: Այս փոփոխությունը կարող է առաջացնել ոչ բարենպաստ հետևանքներ, ինչպես բանկերի, այնպես էլ այլ ֆինանսական կազմակերպությունների համար:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնչորս տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ տվեցին ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը: Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում ճգնաժամային իրավիճակում աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները, որի արդյունքում հնարավորինս նվազագույնի են հասցրել Ընկերության վնասները:

2016թ. ընթացքում Ընկերությունը նախատեսում է շարունակել ակտիվ աշխատել արժեթղթերի շուկայում՝ ներգրավելով պահի դրությամբ բանկային համակարգում գոյություն ունեցող ազատ ռեսուրսները և տեղաբաշխելով դրանք հիմնականում պետական պարտատոմսերում:

Ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները 31.12.2015թ դրությամբ կազմել են 27.5 մլդ դրամ: Ընկերության տեսակարար կշիռը կազմում է 22.4% և զբաղեցնում է 2-րդ տեղը ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվների կազմում: Ներդրումային ընկերությունների ընդհանուր պարտավորությունները կազմում են 23.7 մլդ դրամ, իսկ ընդհանուր սեփական կապիտալը 3.8 մլդ դրամ: Ընկերության տեսակարար կշիռները կազմում են համապատասխանաբար 24.3% և 10.2%: Ներդրումային ընկերությունների պահանջները բանկերի նկատմամբ կազմում են 2.3մլդ, որից 1.6% տեսակարար կշիռը բաժին է ընկել մեր Ընկերությանը: Ուսումնասիրելով ներդրումային ընկերությունների արժեթղթերի պորտֆելը նկատելի է, որ վաճառքի համար մատչելի դասակարգված ակտիվների ընդհանուր 13մլդ մեջ Ընկերության տեսակարար կշիռը կազմում է 9.1%, իսկ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների ընդհանուր 10 մլդ մեջ՝ 42.8%-ը: Ներդրումային ընկերությունների եկամուտների և ծախսերի տարեկան հաշվետվությունների դիտարկումները ցույց են տալիս, որ զուտ տոկոսային եկամուտները կազմել են 381.4մլն, որից 8%-ը բաժին է ընկել մեր Ընկերությանը, բացի այդ 726.6մլն գործառնական եկամուտների կազմում 13%-ը բաժին է ընկել մեր Ընկերությանը, ինչը ևս մեկ անգամ հավաստում է, որ Ընկերությունը կարողանում է ակտիվ աշխատել արժեթղթերի շուկայում ներգրավելով պահի դրությամբ բանկային համակարգում գոյություն ունեցող ազատ ռեսուրսները և տեղաբաշխելով դրանք հիմնականում պետական պարտատոմսերում: Ընդհանուր վարչական ծախսերի մեջ մեր Ընկերության բաժինը կազմում է 30%, ինչը պայմանավորված է առաջին հերթին Ընկերության ուշադրությամբ իր աշխատակիցների նկատմամբ, ինչպես աշխատավարձի տեսքով, այնպես էլ նրանց որակավորման բարձրացմանը ուղղված ծախսերով: Ինչ վերաբերվում է ժամանակաշրջանի շահույթին, ապա պետք է նշել, որ բոլոր ներդրումային ընկերությունների մոտ էլ անկում է նկատվում նախորդ տարվա համեմատությամբ: Ընդհանուր 147մլն-ի մեջ, մեր Ընկերության բաժինը կազմում է -49 %:

Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.

ա) ներդրումային ընկերության կապիտալիզացումը.

Ընկերության ընդհանուր կապիտալը 2015 թվականի վերջում նախատեսվում էր ունենալ 445.8 մլն դրամ: Սակայն դեռ 2014 թ-ի դեկտեմբեր ամսվա ֆինանսական շուկայում տոկոսադրույքների աճը և դրամի պակասորդը հանգեցրին նրան, որ փաստացի ծավալը 31.12.2015թ. դրությամբ կազմեց 384.5 մլն դրամ՝ ապահովելով գործարար ծրագրով նախատեսված ծավալի 86.2%-ը: 2015թ.-ի ընթացքում ընդհանուր կապիտալի տեսակարար կշիռը Ընկերության ռեսուրսային պոտենցիալում կազմել է 6.2%: Ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության մակարդակը 2015թ.-ի ընթացքում կազմել է 6.65%՝ 2014թ. -ի 17% դիմաց: Իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը կազմել է 6.24%: Ընդհանուր ակտիվների փաստացի ծավալը նախորդ տարվա հետ համեմատած ավելացել է մոտ երկու անգամ և 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 6.2 մլդ դրամ՝ գերազանցելով գործարար ծրագրով նախատեսված 4.3 մլդ դրամը և ապահովելով գործարար ծրագիրը 145%-ով: Այսպիսով, նախատեսված ցուցանիշը գերակատարվել էր 45%-ով՝ արդյունավետ աշխատանքի և դիլերային հմտությունների շնորհիվ: Ընդհանուր պարտավորությունների փաստացի ծավալը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 5.86 մլդ դրամ, ինչը ցույց է տալիս, որ նախատեսված ցուցանիշը գերակատարվել էր 51.9%-ով: Գլխավոր պահուստը մնացել է անփոփոխ՝ կազմելով 37.5 մլն դրամ /կանոնադրական կապիտալի 15%-ը/:

բ) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

2015թ.-ի ընթացքում Ընկերությունը ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայություններից իրականացրել է ինչպես ՀՀ պետական պարտատոմսերով և ՀՀ ոչ պետական պարտատոմսերով:


Ընկերությունը տարվա ընթացքում ձեռք է բերել 7.5 մլդ ՀՀ դրամի անվանական արժեքով պետական պարտատոմսեր և վաճառել՝ 2.9 մլդ ՀՀ դրամի, արդյունքում 2015թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի ընդհանուր ծավալն անվանական արժեքով կազմել է 6,6 մլդ դրամ՝ նախորդ տարվա 2.5 մլդ դրամի փոխարեն: Արդյունքում՝ Ընկերության պորտֆելը բաղկացած է հետևյալ արժեթղթերից.

**Ընկերության Պետական պարտատոմսերի
պորտֆելի կառուցվածքը՝ ըստ անվանական
արժեքի 31.12.15 դրությամբ (մլն դրամ)**



Միջոցները հիմնականում ներգրավվել են ՀՀ ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերի միջոցով: Ստորև նորկայացված է, թե տարվա վերջում յուրաքանչյուր գործընկեր բանկում ինչ ծավալի ռեպո գործարքներ են եղել:

Ռեպո գործարքների ծավալը՝ ըստ բանկերի (մլն դրամ)




Ինչպես նշեցինք, Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելը 31.12.2015-ի դրությամբ կազմել է 6.6 մլդ դրամ՝ անվանական արժեքով, որը 2015թ.-ի ընթացքում ապահովել է 632.3 մլն դրամ տոկոսային եկամուտ: Բացի պետական պարտատոմսերից՝ 2015թ.-ին Ընկերությունն իր պորտֆելը համալրել է նաև Գլոբալ Կրեդիտ ՈւՎԿ ՓԲԸ պարտատոմսերով, որոնք Արարատբանկ ԲԲԸ պարտատոմսերի հետ միասին, 2015թ.-ի ընթացքում ապահովել են 2.7 մլն դրամ տոկոսային եկամուտ:


Այսպիսով, 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր տոկոսային եկամուտը կազմել է 670.7 մլն դրամ, ինչը 3%-ով գերազանցել է գործարար ծրագրով կանխատեսված 650 մլն դրամը:

Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի 73%-ը դասակարգված է եղել որպես մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, 22%-ը վաճառքի համար մատչելի, իսկ 5%-ը շաույթով կամ վնասով վերաչափվող ֆինանսական ակտիվներ:

2015թ. դեկտեմբերի վերջին արժեթղթերի պորտֆելի 49%-ը կամ 3.2 մլդ դրամ բաժին է ընկել միջին ժամկետայնության պարտատոմսերին և 51%-ը կամ 3.4 մլդ դրամ՝ երկարաժամկետ պարտատոմսերին: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պորտֆելի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է մոտ 14.72-15.28%՝ ներգրավված միջոցների 10.5781% դիմաց:



Ընկերության ակտիվների կառուցվածքը 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի հետևյալ պատկերը.




զ) Ընկերության շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը.

Ընկերությունն իր առջև խնդիր էր դրել ապահովել 3.0-3.5% եկամտաբերության մարժա ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների միջև:


Ընկերության տոկոսային եկամուտները նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել են 16.3%-ով և կազմել 670,7 մլն դրամ: Տոկոսային եկամուտները հիմնականում ձևավորվում են պետական պարտատոմսերում ներդրումներից: Ընկերությունը գործարար ծրագրով նախատեսված ցուցանիշը գերակատարել է 3%-ով:

Ընկերության տոկոսային ծախսերը նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել են 74%-ով և կազմել 640.7 մլն դրամ: Ընկերությունը գործարար ծրագրով նախատեսված ցուցանիշը գերակատարվել է 23%-ով, ինչի աճը առավելապես պայմանավորված էր ռեպո տոկոսադրույքների աճի հետ: Սակայն հարկ է նշել, որ երկրորդային շուկայում կքնված ռեպո միջին կշռված տոկոսադրույքների հետ համեմատած Ընկերության կնքած ռեպո գործարքների տոկոսադրույքները հիմնականում ցածր են շուկայական միջինից: Սա վկայում է Ընկերության աշխատակիցների արդյունավետ աշխատանքի մասին, քանի որ վերջինիս շնորհիվ հնարավոր է դարձել խուսափել էլ ավելի մեծ ծախսերից:



2015թ. ընթացքում Ընկերությունն աստիճանաբար կրճատել է իր ավանդների պորտֆելը՝ ավանդների մարված գումարներն ամբողջությամբ ուղղելով վարկերի մարմանը, ինչի արդյունքում 31.08.2015թ-ի դրությամբ վարկերի պորտֆելն ամբողջությամբ մարվել է: Արդյունքում, զուտ տոկոսային եկամուտները 2015 հունվարի 31-ին գրանցված -18.2 մլն դրամից աճել և կազմել են 30 մլն դրամ, որն Ընկերություն-աշխատակից փոխհարաբերությունների լավագույն դրսևորման վառ արդյունքն է:

Ինչ վերաբերվում է տոկոսային ծախսերին, ապա վերոնշյալ հիմքերի առկայության պայմաններում զարմանալի չէ, որ գրանցվել է 640.7 մլն դրամ աննախադեպ տոկոսային ծախս, ինչի արդյունքում ժամանակաշրջանի շահույթը կազմել է -71,9մլն դրամ՝ նախատեսված -72.6 մլն-ի փոխարեն, ինչը վկայում է Ընկերության գործունեության դրական շարժի մասին:



դ) հաճախորդների քանակը, վերջիններիս փոփոխության դինամիկան.

2015 թվականին Ընկերության կողմից չեն իրականացվել բրոքերային գործարքներ, սակայն ներգրավվել են ֆիզիկական անձ հաճախորդներ, որոնց հետ կնքվել են բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրեր, ինչպես նաև հակադարձ ռեպո գործարքներ: Ընկերությունն 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի գործող պայմանագրեր երեք հաճախորդների հետ:

ե) կադրային քաղաքականություն.

Ընկերությունն իր կադրային քաղաքականությունը կառուցում է երկարաժամկետ համագործակցության, աշխատակիցների նկատմամբ խրախուսման սկզբունքների հիման վրա:

2015 թվականի ընթացքում Ընկերությունն ավելացրել է աշխատակիցների քանակը՝ ընթացիկ գործունեությունն ավելի արդյունավետ, արագ և որակյալ կազմակերպելու համար:

2015 թվականի ընթացքում Ընկերությունն իր կադրային ներուժը համալրել է ներքին աուդիտի անդամի պաշտոնով, նախատեսելով բարձրացնել ընթացիկ ստուգման /մոնիտորինգի/ արդյունավետությունը:

Ընկերությունը մշտապես ուշադրություն է դարձնում սեփական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին, որը թույլ է տալիս աշխատակիցներին յուրացնել փոփոխվող օրենսդրական դաշտը, ուսումնասիրել գործընկերների հետ համագործակցության ուղիները, ներդրվող և մշակվող տեխնոլոգիաները և այլն: Ընկերությունը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը և ձգտում է նրան, որ բոլոր աշխատակիցներն ունենան համապատասխան որակավորում:

Նշենք, որ Ընկերության բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, աշխատակիցների մեծամասնությունն ունի համապատասխան բարձր որակավորում և արժեթղթերի ոլորտում աշխատելու բազմամյա փորձ:

Ընկերության աշխատակիցները 2015 թվականի ընթացքում մասնակցել են տարբեր մասնագիտական որակավորման դասընթացների, բարեհաջող հանձնել են քննություններ և ստացել որակավորման վկայականներ, ինչն էլ վկայում է, որ Ընկերությունը շահագրգռված է լավագույն կադրեր պատրաստելու հարցում:

զ) նորամուծություններ.

Ընկերությունը 2015թ ընթացքում միջոցառումներ է ձեռնարկել ուսումնասիրելու Ռուսական, Ուկրաինական, Հունական արժեթղթերի շուկաները, որը հնարավորություն է տվել ներդրում կատարել Ռուսական արժեթղթերի շուկայում և ավելի գրավիչ դարձնել Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակը:

Ընկերությունը 2015թ ընթացքում լիարժեք օգտագործել է Հաշվապահական հաշվառման Հայկական ծրագրերը, հատուկ բանաձևերի կիրառման արդյունքում հեշտությամբ արտահանել է ՀՀ ԿԲ հաշվետվությունների համար անհրաժեշտ տեղեկությունները: Պետական արժեթղթերով իրականացվող գործարքների արագ և որակով կատարման համար Ընկերությունը 2015թ-ին ևս մի շարք բանկերի հետ կնքել է գլխավոր համաձայնագրեր և այդ գործարքներն իրականացնում է CBANET համակարգի միջոցով:

Ընկերությունը 2015թ. տեղափոխվել է նոր գրասենյակ: Ընկերությունն ամբողջությամբ նորոգել և կահավորել է գրասենյակը, ապահովելով օրենքով սահմանված անվտանգության բոլոր համակարգերը, համալրել է լիովին նոր համակարգչային և այլ անհրաժեշտ կենցաղային տեխնիկայով, ապահովել է ցանցային սպասարկման նոր որակ, ստեղծել է ժամանակակից և հարմարավետ գրասենյակ:

է) մարկետինգային քաղաքականություն.

Ընկերության մարկետինգային քաղաքականությունը 2015 թվականին ուղղված է եղել պետական պարտատուներում ներդրումների ոլորտում կայուն դիրքերի գրավմանը, գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության ապահովմանը: 2014թ-ի ընթացքում Ընկերության կողմից ԱԼՖԱՍԵԶՅՈՒՐԻԹԻՉ ՄՊԸ ապրանքային նշանի/խորհրդանշի LOGO/ գրանցումը 2015թ-ի ընթացքում ապահովեց ուժեղ բրենդի ստեղծումը, ինչի շնորհիվ առավել ճանաչելի դարձավ ՀՀ ֆինանսական շուկայում: Այդ հնարավորություն տվեց ներկայանալու նոր ձևաթղթերով, վարել նոր գովազդային քաղաքականություն /խորհրդանշով օրացույցներ, նոթատետրեր և այլն/, ինչն էլ ավելի բարձրացրեց Ընկերության գնահատականը/Rating/ հաճախորդների շրջանում:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնչորս տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ տվեցին ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը: Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում ճգնաժամային իրավիճակում աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները, որի արդյունքում հնարավորինս նվազագույնի են հասցրել Ընկերության վնասները:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Գ.Գրիգորյան

Կ.Սիմոնյան